

է թէ ժամանակին պարագաներն աղէկ գործածած է իր մեծ նպատակին համար, եւ երբեք չէ ունեցած միտք եկեղեցական ստորակարգութեան կապը խղել՝ եթէ ճշմարտութիւնն ընդունուի,՝ Այս շշմաւոր գծերը լիով պիտի հաստատմանս յաջորդ տողերուս մէջ:

(Ըրոնակութիւն)

Հ. Ն. ԱԿՈՆՆԱՆ



ՄԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԻԹԵՐ ԳՅՈՒ ԳՆԱՍՏԱՆԱԳԻՐԷՆԻ ՀԱՅՈՑ
ՀԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ԻՐԱՌՈՒՆԷՐ

ՀԱՏԱԽԱՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԿԱՍԱՅԻՆԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆԷՐ

(Ըրոնակութիւն)

ՄԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱՆ ԻՐԱՌՈՒՆԷՐ:

Ա.

Այն բոլոր կարգերը, որոնք սահմանուած են, թէ ինչպէս որեւէ անձնաւորութեան մահուանից յետոյ նրա գոյքը պէտք է անցնի կենդանի մնացածներին, կազմուած են ժառանգական իրաւունքի հիմքով: Ժառանգութիւնը կարող է երկու եղանակով անցնել կենդանի մնացածներին. կամ իրաւով կամ առանց իրաւի: Պատմական տեսակէտից նայած՝ ժառանգութեան առանց կտակի գոյութիւն է ունեցել նախ քան ժառանգութեան ըստ կտակի: Ժառանգութեան ըստ կտակի տեղի է ունենում այն ժամանակ, երբ ժառանգը նշանակուած է հանգուցեալի կամքի համաձայն, որ կարող է արտայայտուել կամ գրաւոր եւ կամ բանաւոր կերպով որոշ վկաների ներկայութեամբ: Իսկ ժառանգութեան առանց կտակի՝ երբ ժառանգը նշանակուած է տիրող իրաւունքի նորմերի համաձայն, անկախ հանգուցեալի կամքից: Միևմիտ Գօշը իւր Դատաստանագրքի մէջ որոշում է այդ երկու տեսակ ժառանգման կարգերը:

Բ.

ԺԱՌԱՆԳԱՆ ԸՄԻ ԻՐԱՌՈՒՆԷՐ:

Միևմիտ Գօշի Դատաստանագրքից երևում է, որ հայերի մէջ ընդունուած էր ժառանգութեան ըստ կտակի թէ գրաւոր եւ թէ բա-

Ի ժառանգութեան Ի.

նաւոր ձեւով: Ամենահաստատուն կտակը համարուած էր այն, որ կազմուած էր առողջ ժամանակ, երբ մարդ իւր կամքը ընդունաւ է լիովին ու անխալ յայտարարելու: Հասկառակ դէպքում, երբ գոյութիւն չունի որեւէ կարգադրութիւն որեւէ անձի կողմից ի դէպ մահուան, այն ժամանակ հիւանդն, իւր տկարութեան երբորդ օրն, պէտք է կանչէ քահանային ու երեք վկաներ եւ «գծառանգաւորս եկեղեցւոյ», որոնց ներկայութեամբ պէտք է կազմէ իւր կտակը: Այս տեսակ կտակը չի կորցնում ոյժը նոյն իսկ այն ատեն, երբ հիւանդը մեռնում է կտակ կազմելու օրը, եթէ միայն «չեց թափեալ ի մտաց», Բայց երբ հիւանդն այնպիսի նեղութեան մէջ է, որ անհնարին է նրա կողմից գրաւոր կարգադրութիւն անել, այդ դէպքում բաւական է, որ նա իւր կամքը յայտնէ բանաւոր կերպով վերոյիշեալ վկաների ներկայութեամբ, որոնք ուխտելով պարտաւոր են դա ի կտակար անելու կտակով մահուանից յետոյ: Այստեղ Միևմիտ Գօշն նոյն իսկ շեշտում է, թէ «զուր ինչ ի դէպ իցէ ընդ յառնելն կատարել, կատարիցէ. եւ զոր ինչ զինի մահուան՝ զինի կատարիցեն» (II, ԳՂ):

Կտակ կազմելու իրաւունք ունի իւրաքանչիւր իրաւունակ անձն. սակայն սրա մասին Դատաստանագրքի մէջ յատուկ ոչ մի որոշում չենք գտնում: Դորա փոխարէն Միևմիտ Գօշը պարզաբանում է, թէ ժառանգութիւն թողնողը լիակատար իրաւունք ունի իւր գգը կարգադրելու եւ սրա համեմատ իւր կամքը յայտնելու. «զամենայն ինչ զտան իւր, եւ զՏօգւոյ եւ զԹաղման իւրոյ խոսնացի ըստ հաճոյից (կամաց) իւրոց» (II, ԳԼ. ԳՂ): Միևմիտ անգամ այն բոլոր դէպքերում, երբ ժառանգութիւնն առանց օրէնքների համաձայն չի կարող անցնել այս կամ այն ազգականին, կտակողը իշխան է «կենսոյն ժառանգեցուցանել զնոցա, եթէ կամեսցի իւր զօտարս» (II, ԳԼ. ԿԳ): Նա իրաւունք ունի ժառանգ հաստատել թէ այն ազգակիցներին, որոնք ըստ «ժառանգութեան առանց կտակի» ոչ մի անո չպէտք է ստանային, թէ ծառաներին եւ թէ այլ սիրելի անձերին (II, ԳԼ. ԳԴ): Նմանապէս նա իրաւունք ունի իւր բոլոր հարաշատ զաւակներին ու ազգականներին, որոնք ըստ օրէնքի նախամեծք տեղ ունէին ժառանգման մէջ, զրկել ժառանգութիւնից, եթէ սրանք որեւէ կերպով մեղաւնել են իրեն դէմ. «որ զճնողն հարկանէ, կամ զիւրն անարդէ զճնող ու եւ այլն (I, ԽԲ. Հ. II, ԳԼ. ԿԴ):

կտակը կարելի էր ոչնչացնել նախ քան կտակողի մահը: Այստեղ ինչպէս եւ այլ ժառանգական հարցերում, ամեն ինչ կախուած էր միշտ կտակողի լիակատար կամից եւ կտակի օրինականութիւնն միմիայն մահուանից յետոյ էր առաջ գալիս. «Եւ թէ պատահի յառնել հիւանդին յետ եւ փոխել զկտակն՝ իշխան լինի, զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյ» (II, 41. 42):

Ըստ կտակի ժառանգման նկատմամբ հայոց Դատաստանագրքի վրայ ակնհերեւ ազգեցութիւն է ունեցել Բիւզանդական իրաւունքը: Յուստինիանական իրաւունքը պահանջում էր, որ կտակ կազմելիս, ժառանգութիւն թողնողը գրաւոր, իր սեփական ձեռքով պէտք է կարգադրութիւն անէ, կամ թէ չէ բանաւոր ձեւով միայն 7 վկաների ներկայութեամբ յայտնէ իւր կամքը: Յետագայում Ekloga, Prochiron ու Basilika այդ վկաների թիւը իրենցում են 5ի. իսկ կայսր 1էօ խելացին եւ սրանից առաջ կայսրուհի Իրենէն իրենց ռովբայանքով testamentum ruri conditumի վերաբերմամբ սահմանում են, որ գիւղերում եւ ընդհանրապէս նոսր ազգաբնակչութեան տեղերում վկաների օրինական թիւը կարելի է 3 հոգին բաւական համարել: Բացի այդ՝ նկատում ենք մասամբ նաեւ ասորա-հռովմէական անուանած օրենքների ազդեցութիւնը Միսիթար Գօշի վրայ: Այդ օրենքների ՂԴ յօդուածը շեշտում է, որ եթէ մէկը իւր ժամանակին կտակ չէր կազմել, առանկալ մահուանից առաջ կարող է իւր վերջին կամքը յայտնել բանաւոր ձեւով 3 վկաների ներկայութեամբ, որպէս զի ուրիշ անձեր այդ մեռնողի կամքը գրի անցկացնեն եւ դատաւորին ներկայացնեն ի հաստատութիւն:

Սակայն Միսիթար Գօշի պահանջը, թէ կտակողը պիտի իւր կամքը յայտնի քահանայի ու երեք վկաների ներկայութեամբ շատ մեծ նմանութիւն ունի նաեւ արեւմտեան հին եկեղեցու կանոնական իրաւունքի սահմանած նօթին՝ testamentum coram paracho et duobus testibus.

Գ.

Ժառանգութեան ասանց կարգը:

I.

Երբ գոյութիւն չունի ոչ մի կտակ, ժառանգութեան իրաւունքը գրւում է մտակալ

ազգականներին: Պարզեք, թէ ինչպէս էր հասկանում եւ ինչպէս էր կիրառում Միսիթար Գօշը ազգականութեան հարցը եւ ընդհանրապէս ինչ նշանակութիւն ունէր վերջինս ժառանգական իրաւունքի նկատմամբ:

Ամերիկացի յայտնի ազգագրագէտ Մօրգանն, ուսումնասիրելով ընտանիքի զարգացման պատմութիւնը եւ համեմատելով հին ժողովրդների ժառանգման եղանակները ժամանակակից անկուշտութեան ժողովրդների ժառանգման սովորութիւնների հետ, դուրս է բերում երեք բնորոշ շրջան, որոնք աստիճանօրէն զարգանալով, յաջորդում են իրար:

Առաջին շրջանն — ժառանգումն ցեղի ծնունդների (gens) կողմից: Շատ հին ժամանակները բնաւ գոյութիւն չունէր ամուսնութիւնն այն մարդով, ինչպէս մենք ենք այժմ հասկանում: Ընտանեկան կեանքը, հիմնուած լինելով սերնդական կազմի վրայ, սեռական յարաբերութիւնների որոշ ազատութիւն էր վայելում: Ամուսնութիւնը ժամանակաւոր բնաւորութիւն ունէր եւ այն էլ, երբ այդ ու կին մօտենում էին իրար. ընդհանրապէս ամուսնական յարաբերութիւնները խմբակցական էին: Զաւակի ծնունդուց յետոյ հայրը սովորաբար անյայտ էր մնում: Ուրեմն անհատական ազգակցութիւնն ասած բանը գոյութիւն չունէր այս կարգում եւ ազգակցութիւնն մայրական գծով էր գնում. քանի որ զաւակները միմիայն իրենց մօրն էին ճանաչում եւ սրա հետ էին կապուած: Այսպիսի պայմաններում սերնդի որեւէ անգամի մահուամբ, սրա գոյքը ժառանգաբար անցնում էր ամբողջ սերնդին, այսինքն սեփականութեան իրաւունքի արդող սկզբունքի համեմատ պէտք է մնար մեռնողի սերնդի շրջանակի մէջ, դառնար սեփականութիւն բոլոր նրա ցեղակիցների մայրական գծով:

Երկրորդ շրջանը — ժառանգումն ֆէդերատիւ (agnatio) կողմից: Այս շրջանը սկսում է զարգանալ ցեղական նստակեաց կեանքի վերջնական հաստատումից, երբ սոցիալ-տնտեսական նոր պայմաններում առաջ է գալիս ընտանեկան յարաբերութիւնների որոշ տեւողութիւն, ուրեմն եւ ազգակցութիւն հօրական կողմից: Ժառանգումն այս դէպքում ի կատար էր ածւում համաձայն այն փաստի, թէ յաջորդաբար որքան մօտ են իրենց ծագումով սերնդի ան-

1 Brauns und Saehau, Das syrisch-römische Rechtbuch, Berlin.

1 А. Т. Морганъ. Происхождение общества. СПб. 1900, кр. 518-545:

դաժները հօրական կողմից, այսինքն օգնություն սկզբունքի:

Երբորդ շրջանը ժառանգումն ընտանիք կողմով բոլոր ազնաժների կողմից, որ նոյնպես ազնատական սկզբունքի վրայ է հիմնուած: Այստեղ տիրապետում է զարգացած նահապետական ընտանիքի կազմը, ուր սեփականության իրաւունքը պատկանում է տանուէրին *pater familias*-ին: Սրա մահով ինչքը չլիւթ է դուրս գալ ընտանիքի սահմաններից, այլ անցնում է նրան յաջորդող նոր տանուէրին իրաւասութեանը, նոր նահապետին, որ այժմ դառնում է ընտանեկան հաստատական տնտեսական տնտեսական: Բայց երբ հօր մահուամբ տեղի են ունենում բաժանման դէպքեր, այն ժամանակ արդէն ժառանգման իրաւունքը անցնում է բոլոր զաւակներին եւ ապա վերջիններիս բացակայութեան դէպքում յաջորդաբար միւս մասիկ ազգակցական սաստիճաններին:

Վերջիշեւելից պարզ հետեւում է, թէ ինչ մեծ դեր են խաղում ժառանգական հարցում ազնատական յարաբերութիւնները տուրքների ստիպել-կուտորական զարգացման որոշ շրջանների մէջ: Եւ քանի որ հայոց դատաստանաբար ժառանգական իրաւունքը տուգորուած է ամբողջովին ազնատական սկզբունքով, ուստի անհրաժեշտ ենք համարում, մի փոքր աւելի ծանրանալով այդ հարցի վրայ, պարզել նրա էութիւնը:

Ազնատական ազգակցութեան էական սկզբունքը խիստ բացայայտ բնորոշում է այն իրաւաբանական նշանաւոր ստացուածքի մէջ, թէ *Mulier est finis familiae*, կիս մարդը սերնդի, գերդաստանի սահմանն է, վերջաւորութիւնն է: «Եթէ վերջները ազգակցութեան բոլոր ծիւղերը, որոնք զոյանում են երկու ամուսինների՝ այր եւ կնոջ՝ զոյգից, եւ այդ տոհմագրական ծիւղաւորութեանը հետեւելով, կանգնենք առաջի պատահած կնոջ անուն վրայ եւ այլեւս չհետեւելով այդ առանձին ծիւղի միւս ծիւղաւորութիւններին, դուրս հանենք իդական սեռի իւրաքանչիւր անձի ժառանգներին, այն ատեն բոլոր մնացած անձերը իր ինին ազնատներ եւ նրանց միջի կապը անուանում է ազնատական¹»: Հին իրաւաբանական հասկացութեան մէջ ուր ազգակցութեան ծիւղաւորութեան մէջ պատահում է կանացի անուն, այնտեղ տոհմագրութիւնը արդէն վերջացած է

համարում, իդական անձի ոչ մի ժառանգ, յետնորդ, ոչ մի արեւնակից ազգական չի ընդունում գերդաստանական ազգակցութեան վերաբերեալ նախնական հասկացութեան մէջ: Այս փաստի պատճառը պէտք է տեսնել նրանում, որ ազնատական կապի հիմքը ոչ թէ ամուսնութիւնն, այսինքն հօր եւ մոր զուգակցութիւնը, այլ հայրական իշխանութիւնը, *patria potestas* էր ճանաչուած: Այդ կապերը ոչ թէ արեւնակցական ազգակցութեան վրայ էին հիմնուած, այլ ընդհանրապէս մի իշխանութեան վրայ, որի շնորհիւ գերդաստանը դառնում էր քաղաքացիական ազգակցութեան մի տեսակ միութիւն: Դախնական ըմբռնմամբ, ուր սկսում էր *patria potestas*, այնտեղ էլ սկիզբ էր առնում ազնատական ազգակցութիւնը: Ահա թէ ինչու որդեգրութեան միջոցով ազնատական գերդաստանի անգամ էին դառնում եւ ընդհանրական ընտանիքի միջից հեռանալով, հօրական իշխանութիւնը դուրս գալով (*emancipatio*), գերդաստանի իւրաքանչիւր անգամ զրկում էր ազգակցութեան ազնատական իրաւունքներից: Այս վերջին հանգամանքի մէջ է թագնուած այն երեւոյթի բացատրութիւնը, թէ ինչու իդական սեռին պատկանող անձերից առաջացած յետնորդ ժառանգները դուրս էին մնում ազգակցութեան սահմաններից, եթէ իդական սեռի անձը մեռնում էր ճամուսնացած, նա ի հարկէ ժառանգներ չէր կարող թողնել: Եթէ ամուսնանում էր, այն ժամանակ նրա զաւակները ենթարկւում էին իւր ամուսնու *patria potestas*-ին եւ ոչ թէ իւր հօր, որի գերդաստանը այսպիսով իսպառ զրկում էր այդ զաւակներից: Այսինքն իդական սեռի իւրաքանչիւր անձը իւր հօրական գերդաստանի նկատմամբ չէր ներկայացնում մշտական յարաբերական ազգակցական կապի օղակ, չէր ներկայանում իւր հօր գերդաստանի *patria potestas*-ի մշտական եւ ենթակա մի անձն: Կինը, ամուսնանալով, մտնում էր օտար գերդաստան, յարցանում էր զաւակներ օտար *patria potestas*-ի եւ ընդհանրապէս օտար գերդաստանի ազգակցութեան ծաղկման համար¹: Այդ պատճառով էլ հռոմէական հին իրաւունքում, կինը ամուսնանալիս ենթարկւում էր *demanatio capitis*-ին եւ ընդամենն ազնատական իրաւունքներից զրկւում էր:

¹ Գ. Մ. Мона-Арепеев право, էր. 117:

¹ T. C. Мона-Арепеев право, էր. 118:

